

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12**  
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

22.07.2003թ.

ժ. 11.<sup>00</sup>

**Մասնակցում էին՝**

Ս. Մնացականյան (*Խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ. Գևորգյան, Վ. Դանիելյան, Յու. Պողոսյան, Հ. Պետրոսյան (*Խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*Խորհրդի քարտուղար*)

**Հրավիրված էին՝** Լ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ*), Ջ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ*), Վ. Սարոյան (*Իրավաբանական բաժնի պետ*),

**Օրակարգի նախագծում` երեք հարց.**

1. Հայաստանի Հանրապետությունում վիճակագրության բնագավառում Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի՝ «Գյուղատնտեսություն, որսորդություն, անտառային տնտեսություն», «Ձկնորսություն, ձկնաբուծություն», «Հանքագործական արդյունաբերություն» բաժինների պարտադիր կիրառման հանգամանքը հաստատելու մասին.

*/Չեկուցող՝ Վ. Դանիելյան/*

2. Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից մշակված «Ջրաղմունքների դասակարգչի (մաս I) նախագծին հավանություն տալու մասին.

*/Չեկուցող՝ Վ. Դանիելյան/*

3. Այլ հարցեր

Նախագահի կողմից ներկայացվեց Խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

*/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

1. Հայաստանի Հանրապետությունում վիճակագրության բնագավառում Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի՝ «Գյուղատնտեսություն, որսորդություն, անտառային տնտեսություն», «Ձկնորսություն, ձկնաբուծություն», «Հանքագործական արդյունաբերություն» բաժինների պարտադիր կիրառման հանգամանքը հաստատելու մասին.

*/Չեկուցող՝ Վ. Դանիելյան/*

Նշվեց, որ «Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների» Հայաստանի դասակարգչի մշակվել է հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2001-2003թթ. պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի բաժին 3-ի մաս 2-ի երկրորդ պարբերությամբ սահմանված դրույթի (աշխատանքի) ապահովման անհրաժեշտությունը և պայմանավորված է երկրում միասնական դասակարգիչների ստեղծման ու ներդրման, և այդ ճանապարհով բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, տնտեսավարող սուբյեկտների և

հասարակության այլ կառուցվածքային միավորների միջև կոմունիկացիոն ունակությունների համահարթեցման նկատառումներով:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

1. Հայաստանի Հանրապետությունում վիճակագրության բնագավառում կիրառել «Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների» Հայաստանի դասակարգչի՝ «Գյուղատնտեսություն, որսորդություն, անտառային տնտեսություն», «Չկնորսություն, ձկնաբուծություն», «Հանքագործական արդյունաբերություն» բաժինները (համաձայն հավելված 1-ի):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2004 թվականի հունվարի 1-ից:

*/Նորմատիվ/*

*/Զվեարկության արդյունքները - կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

2. Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից մշակված «Ջբաղմունքների դասակարգչի» (մաս I) նախագծին հավանություն տալու մասին.

*/Ձեկուցող՝ Վ. Դանիելյան/*

Նշվեց, որ Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից մշակված «Ջբաղմունքների դասակարգչի» (մաս I) նախագծի մշակման համար հիմք է հանդիսացել «Հայաստանի Հանրապետության ստանդարտացման 2003թ. ծրագրի» կետ 1.7.1-ը, որի համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը վերապահվել էր խնդրո առարկայի մշակման աշխատանքների համակատարողի գործառույթը: Դասակարգչի մշակման աշխատանքների անհրաժեշտությունը բխում է նաև «Հայաստանի Հանրապետության 2001-2003թթ. պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի դրույթներից (բաժին 3-ի մաս 2-ի չորրորդ պարբերություն) և ուղղակիորեն առնչվում է աշխատանքի վիճակագրության վարմանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից մշակված «Ջբաղմունքների դասակարգչի» (մաս I) նախագծին:

*/Արձանագրային/*

*/Զվեարկության արդյունքները - կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան